

**ԳՈՐԾ ԱՂՋԻԿԸ / Հայ ժողովրդական հեքիաթներ, Հատոր VIII / Գուգարք (Լոռի), Լոռու
բարբառ (խոսվածք)**

Մի թաքավոր օխտը տղա յա ունենում, օխտն էլ ազափ են ըլլում:

Ասում ա.— Ես ձեզ հմար կնիկ չեմ ուզիլ, գնացեք նետ ու անեղ վի կալեք, գեղի վրա գձեցեք, ում կտրի վրա վե կգա, նրա ախչիկն էլ կուզեք: Գնում են գձում: Պուճուրի նետը գնում ա մի քոտկի վրա վե գալի: Էն մեկեղնին ամեքը մնին ուզում են, բերում են, նա մնում ա նհե:

Օրի մի օրն ասում ա.— Հլա գնամ տենամ էն ի՞նչ էր իմ բախտը, որ գնաց էն քոտկի վրա վեր էկավ:

Գնում ա տենում՝ հրե մի գորդը, աչքերը պլշած, հրե ճամփա ա պհրմ: Եղ եղ ա դառնում, գալի: Էն գորդը դրա եղնեն ա ընգնում, գալի: Ինչքան ծեծում ա, իլլաջ չի ըլլում. եղնեն գալիս ա տուն մտնում, օջախի քարիցը կայչում:

Շատ են կենում, քիչ են կենում, ախպերտինքն ու ախպերակնանիքն ասում են.— Էս ի՞նչ ա, գնում չի իրան հմար մի կնիկ ուզե, գորդը բերել ա ու օջախիցը կայցրել:

Գորդին ինչքան ծեծում են՝ դուս չի գնում: Ախպերտինքն էղ ախպորը բժանում են: Գորդը վի ա կենում, եղնեն գնում ա տանը մնում նստած. տալիս ա ջարթում ա՝ դուս չի գնում:

Ինքը գնում ա հանդը, գալիս ա տենում՝ տունը թամզած, խորակը հագրած, հմա մարթ չկա տանը:

Մի օր, երկու օր, գնում ա ախպերակնանոցն ասում ա. — Էղ ի՞նչ ա, չկել հմի ինձ մտիկ չի անեիք, հմի բլանիք էք ճարել, գալիս էք բաց անում, ամեն բան հագրը մ:

Ասում են.— Չէ՛, չէ՛, մենք գալիս չենք, դու փասարը պհե. հլա տես էղ ո՞վ ա:

Էնա մի օր էլ հաց չի ունենում, թորոնն էլ տանն ա ըլլում, փետ էլ ա բերում, ջուր էլ, ալիք էլ ընդի դնում, ինքը դռան տակին տապ անում: Հլը մին էլ տենում ա որե՛ն էն գորդը տրաքեց, միջիցը մի հուր ու մալաք, մի հուրի փերի ախչիկ դուս էկավ, կռները վի քաշեց ու ընդի կաղնեց: Ալիքը մաղում ա, թորոնը վառում, խմորն ունցում, էն նաչարն էլ ընդի թմաշ ա անում դռան տակից, ուրխացել ա, հմա հլա դեռ դուս չի գալիս, խոսում չի:

Էնա որ խմորը գնդելու վախտն ա ըլլում, դուս ա գալիս, գնում ա պչպաչորվում, փթաթվում, ասում ա.— Որ սհե ես, էլ խի՞ ես ինձ չրչարում:

Գնում ա գորդան խրխին վի ունում, որ թորոնը գձե, բղավում ա, թե.— Գձիլ մի, մի օր պետկը կգա:

Նա անջակ չի անում, գձում ա թորոնը:

Ասում ա.— Կփռշմանիս այ:

Էնա երկու օր, իրեք օր, խնդաս՝ ինչ խնդում են, ախպերակնանիքը չիմ իմանում են, գալիս են տեսութին: Խաբարը գնում ա էն քոփակ հորը:

Ասում ա.— Էղ դրա լայեղը չի, իմ լայեղն ա, թե կա՞ դա յա, թե կա ոչ՞ դա յա, գնացեք բերեք:

Ախչիկն ասում ա.— Հմի տեհար, որ ասեի խրխին թորոնը մի գձի՞լ, հմի էն քոփակն ինձ տիրանալ տի, էնա որ խրխին ըլեր, մեչը կմտնեի, նա էլ ոտի տակը կգձեր, սրտամնա կլեր, կհեռանար:

Էնա էկող մարթկերանց հետ, տղեն էլ իրա կնգանը վի յա ունում, տանում են հոր կուշտը:

Հերն ասում ա.— Էլ դու սրա հետ գորձ չունիս, գնա, քու մերն էսա հինգ տարի ա մեռել ա, մեր զանգակի բլանիքը նա պհել ա, թե կգնաս տեղը կիմանաս, քի կտամ, թե չէ, էնա տալ չեմ:

Էն նաչարը սլարած գնում ա պատի տակին կուշ գալի, լաց ըլլում:

Ենա հա՛ կնիկը դուս ա գալի, ասըմ ա.—Սլարիլ մի, գնա էն քոթկի կուշտը, իմ ախպերն ընդի ա, ասա՛ Ագրաբմբո՛ւլ, Ագրա-բմբո՛ւլ դուս արի, Սաչի Սևանն ասեր թե՛ էս տղին տար, սրա մերը մեռած ա, դու տեղը գիդես, գնացեք բլանիքը բերեք:

Ենա գնըմ ա, Ագրաբմբուլը դուս ա գալի: Ասըմ ա: Վի են կենըմ գնըմ:

Աղրաբմբուլն ասըմ ա.— Դվորը գնամ՝ եղնես արի, եղ չի մտիկ անես, ինչ քան օձ ու բան ջիի ճամփին, եղ չի մտիկ անես, ոտկելով անց կաց:

Ենա գնըմ են, ճամփին մի զաբուն եզն ա ջիըմ:

Տղեն ասըմ ա.— Քու դարդն ի՞նչ ա, որ էս չայիր-չիմանըմը դու տհե զաբուն էս ու կապած:

Ասըմ ա.— Գնա՛ արի, եղնա կասեմ:

Հմի էլ մի քարոտ տեղ մի քոք եզն ա կապած, ասըմ ա.— Ի՞նչ էս ուտըմ, ասըմ ա.— Գնա՛ արի, եղնա կասեմ:

Գնըմ են աղաք: Տենըմ ա՛ հրես մի մարթ մի վենձ պղինձ լիքը միս՝ խառնելով խառնելով էս ծերն ա գնըմ՝ էն ծերը, եղ գալիս ա մի շերեփի էն արնիցը խմըմ:

Ասըմ ա.— Էդ ո՞նց ա որ էն մսիցն ուտըմ չես, եղ արնիցն էս խմըմ:

Ասըմ ա.— Գնա՛ արի, եղնա կասեմ:

Ենա գնըմ են:

Ագրաբմբուլն ասըմ ա.— Ըստի օցեր շատ կան, եղ չի մտիկ անես:

Ենա օցերը ոտկելով գնըմ են, մորը գոնըմ (հա դե շաշի գրից ա էլի, հինգ տարի մեռած մորը գնըմ են գոնըմ)¹ :

Ասըմ ա.— Նանի՛ :

Մերն ասըմ ա.— Չանի՛ :

Ասըմ ա.— Մեր զանդուկի բլանիքն ո՞ւր ա, իմ հերն ասեր՝ տեղը շիանց տուր:

Ասըմ ա.— Վո՛ւյ, գրողը նրան տանի, ըրեխիս չըջարելով որդի ա դրգել: Գնա ասա,— այ քոռ մահը քի տանի, հրե մեր տան վենձ սնիցը կախ արած ա: Վայ տամ նրա քոփակ գլխին, տվեք էն շանը ստկացրեք էլի՞, քա՞նի ձեզ չըջարե:

Էնա եղ են գալիս: Էն օցերը ոտկելով՝ էն խորակը խառնող մարթի կուշտըն են հասնըմ:

Ասըմ ա.— Քոլ դարդն ի՞նչ ա, որ էս եքա պղինձը լիքն ա, դուն ուտըմ չես, էս արնիցն էս խմըմ:

Ասըմ ա.— Ես հարուստ մարթ էի, մշակն ի պեհի: Խորակն էփիլ տեի, էս ուտեի, նրանց տեի ոչ: Հմի ասըմ են— էլ դուն ուտիլ մի, նրանք տին ուտիլ, հմի էլ արինն ա քու փայր:

Եդո գալիս ա քոք եղան կուշտը: Նա էլ ասըմ ա:— Ես սաղ վախտըս իմ փայ խտը տեի ուրըշնուն, հմի լավութիներ եղ են տալի:

Գալիս ա զաբուն եզան կուշտը, ասըմ ա.— Քու դարդս ի՞նչ ա, որ էս չայիր չիմանըմը կապած, դու տհենց զաբուն էս:

Ասըմ ա.— Ես էն վախտը մի հուրեին եզն էի, ըստուր հարու տեի, ընդուր հարու տեի, փայներուն ուտեի: Հմի ասըմ են— էլ քի չի հասնըմ, հմի էլ նրանք տին ուտիլ, թողըմ չեն էս ուտեմ:

Գնըմ ա քոփակ հոր կուշտը, ասըմ ա.— Հրե բլանիքը վենձ սնիցը կախ արած ա:

Կրակ ուտե նա, ինչ որ հեր ա, հմի էլ ասըմ ա Գնա ինձ հմար մի անմահական խնձոր բի, ուտեմ (գրող ուտե) տասնհինգ տարեկան տղա դառնամ:

Եդ գնըմ ա սլարած պատի տակին նստըմ ա, լաց ըլըմ: Սաչի Սևանը եղ դուս ա գալիս, ասըմ ա.— Ի՞նչ էս սլարել, գնա եղ իմ ախպորն ասա, թող մեր բաղիցը իրեք անմահական խնձոր տա, մինը դու կատես, մինը էս, մինն էլ կտանք սրան:

¹ Պատմողի թերահավատությունը—Օ. Բ.:

Էնա գնում ա: Ագրաբմբուլին ասում ա, խնձորնին վեր ա ունում բերում: Մինն ինքն ա ուտում, մինը տալիս ա Մաչի Սևանին, մինն էլ տալիս են էն քոփակին: Իրանք դիս են ջահելանում, էն քոփակն էլ դառնում ա տասնհինգ տարեկան տղա:

Հմի էլ ասում ա.— Մի բան էլ տիմ ասիլ, թե էն էլ արիբ՝ կնիկդ քեղ տիմ տալ, թե չէ՝ տալ չեմ:

Ասում ա.— Գնալ տիս ծովի ձիանը բերիլ, կթիլ նրանց կաթնով ինձ լեղացնիլ:

Եդ էն նաչարը գնում ա պատի տակին կուչ գալի, սլարում:

Մաչի Սևանն ասում ա.— Խի՞ ես սլարել, գնա իմ հորանց ծովի ձիանը բի կթենք, լեղացնենք:

Եդ գնում ա էն քոթկի կշտիցը դի տալի, ասում ա.— Ագրաբմբուլ, Մաչի Սևանն ասեր մեր ձիանը դրգե, կթենք, էս շանը լեղացնենք:

Էնա դուս ա բերում, ձիանն ու իրան տալի:

Որ բերում ա գեղամեչը, չիմ խալիսը հեյբաթ են մնում, ասում են.— Էս հուրեին ձիանուցը ո՞նց տին կաթը հանիլ սրանք:

Էն նաչարն էլ բերուց, հմա գիդե ոչ ինչ անե:

Էնա Մաչի Սևանը դուս ա գալիս, ասում ա.— Վախիլ մի, ես կկթեմ: Գնում ա ձիանու մազիցը մատներին ա փթաթում, ձիանն աղաք Եդո գալիս ա քոք եղան կուշտը: Նա էլ ասում ա.— Ես սաղ վախտըս իմ փայ խտտը տեի ուրըշնուն, հմի լավութիներ եղ են տալի:

Գալիս ա գաբուն եզան կուշտը, ասում ա.— Քու դարդս ի՞նչ ա, որ էս չայիր չիմանումը կապած, դու տհենց գաբուն ես:

Ասում ա.— Ես էն վախտը մի հուրեին եզն էի, ըստուր հարու տեի, ընդուր հարու տեի, փայներուն ուտեի: Հմի ասում են— էլ քի չի հասնում, հմի էլ նրանք տին ուտիլ, թողում չեն ես ուտեմ:

Գնում ա քոփակ հոր կուշտը, ասում ա.— Հրե բլանիքը վենձ սնիցը կախ արած ա:

Կրակ ուտե նա, ինչ որ հեր ա, հմի էլ ասում ա Գնա ինձ հմար մի անմահական խնձոր բի, ուտեմ (գրող ուտե) տասնհինգ տարեկան տղա դառնամ:

Եդ գնում ա սլարած պատի տակին նստում ա, լաց ըլում: Մաչի Սևանը եդ դուս ա գալիս, ասում ա.— Ի՞նչ ես սլարել, գնա եդ իմ ախպորն ասա, թող մեր բաղիցը իրեք անմահական խնձոր տա, մինը դու կատես, մինը ես, մինն էլ կտանք սրան:

Էնա գնում ա: Ագրաբմբուլին ասում ա, խնձորնին վեր ա ունում բերում: Մինն ինքն ա ուտում, մինը տալիս ա Մաչի Սևանին, մինն էլ տալիս են էն քոփակին: Իրանք դիս են ջահելանում, էն քոփակն էլ դառնում ա տասնհինգ տարեկան տղա:

Հմի էլ ասում ա.— Մի բան էլ տիմ ասիլ, թե էն էլ արիբ՝ կնիկդ քեղ տիմ տալ, թե չէ՝ տալ չեմ:

Ասում ա.— Գնալ տիս ծովի ձիանը բերիլ, կթիլ նրանց կաթնով ինձ լեղացնիլ:

Եդ էն նաչարը գնում ա պատի տակին կուչ գալի, սլարում:

Մաչի Սևանն ասում ա.— Խի՞ ես սլարել, գնա իմ հորանց ծովի ձիանը բի կթենք, լեղացնենք:

Եդ գնում ա էն քոթկի կշտիցը դի տալի, ասում ա.— Ագրաբմբուլ, Մաչի Սևանն ասեր մեր ձիանը դրգե, կթենք, էս շանը լեղացնենք:

Էնա դուս ա բերում, ձիանն ու իրան տալի:

Որ բերում ա գեղամեչը, չիմ խալիսը հեյբաթ են մնում, ասում են.— Էս հուրեին ձիանուցը ո՞նց տին կաթը հանիլ սրանք:

Էն նաչարն էլ բերուց, հմա գիդե ոչ ինչ անե:

Էնա Մաչի Սևանը դուս ա գալիս, ասում ա.— Վախիլ մի, ես կկթեմ:

Գնում ա ձիանու մազիցը մատներին ա փթաթում, ձիանն աղաք են անում, գնում ա կթում, ընգնանին լցնում, ասում ա— Դե եդ ձիանը տար իմ հորանցը տուր, թեզ արի, քոփակին էս ա վերջացնում ենք:

Կաթը տքարնում ա: Տղեն եղ գալիս ա, էն քոփակին բերում են լեղացնում: Հլե կաթը վրեն են
ածըմ թե չէ, քոփակը փցխում ա. եղնա քար դառնում: Նրանից եղն ամեն օր՝ րրիգունն էլ,
ըռավոդն էլ՝ տղեն էն քարի վրիցը ձիանը վեր ա ըլում, տանում ջուրը, բերում:
Նոր էնա օխտն օր, օխտը քշեր հրսանիք են անում, էն կրակի էկած Մաշի Սևանն էնքան սիրուն
ա ըլում, որ ախպերտինքն էլ, սաղ գեղն էլ՝ թմաշա են դուս գալի: Նոր ամեն ցավից, չոռից
պրծնիս, ինչ պրծնում են: